

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

Հ Հ Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

(Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և քաղաքացիական ծառայության առաջատար և կրկուսեր պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների արեստավորումների թեստավորման փուլի համար)

Չարդ 1

Ըստ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի՝ ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը՝

- ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

(ՀՀ Սահմ. հոդ. 1)

Չարդ 2

Ինչպե՞ս է ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում Հայաստանի Հանրապետությունում՝

- ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

(ՀՀ Սահմ. հոդ. 2)

Չարդ 3

Նշվածներից ո՞րն է հանրային իշխանության պարտականություններից՝

- մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը:

(ՀՀ Սահմ. հոդ. 3, մաս 2)

Չարդ 4

Ինչի՞ հիման վրա է իրականացվում պետական իշխանությունը՝

- իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Չարդ 5

Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն օրենքները՝

- սահմանադրական օրենքներին:

(ՀՀ Սահմ. հոդ. 5, մաս 2)

Չարդ 6

Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝

- սահմանադրական օրենքներին և օրենքներին:

(ՀՀ Սահմ. հոդ. 5, մաս 2)

Չարդ 7

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում ո՞ր նորմերն են կիրառվում՝

- միջազգային պայմանագրերի նորմերը:

(ՀՀ Սահմ. հոդ. 5, մաս 3)

Չարդ 8

Ինչպիսի՞ գործողություններ են իրավասու կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք՝

- միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

(ՀՀ Սահմ. հոդ. 6, մաս 1)

Չարդ 9

Ինչպիսի՞ իրավական ակտով կարող են Սահմանադրությամբ նախատեսված մարմինները լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 6, մաս 2)

Ֆարց 10

Ե՞րբ են ուժի մեջ մտնում օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝

- օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

(ՀՀ Սահմ. հոդ. 6, մաս 3)

Ֆարց 11

Ինչպե՞ս են անցկացվում ՀՀ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեները՝

- ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

(ՀՀ Սահմ. հոդ. 7)

Ֆարց 12

Ո՞ր սկզբունքներին կամ նորմերին չեն կարող հակասել կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը՝

- ժողովրդավարական սկզբունքներին:

(ՀՀ Սահմ. հոդ. 8, մաս 4)

Ֆարց 13

Սեփականության ո՞ր ձևերն են ճանաչվում և հավասարապես պաշտպանվում Հայաստանի Հանրապետությունում՝

- բոլոր ձևերը:

(ՀՀ Սահմ. հոդ. 10, մաս 1)

Ֆարց 14

Նշվածներից ո՞ւմ բացառիկ սեփականությունն են ջրային ռեսուրսները և ընդերքը՝

- պետության:

(ՀՀ Սահմ. հոդ. 10, մաս 2)

Ֆարց 15

Ինչի՞ հիման վրա և ի՞նչ նպատակով է իրականացվում ՀՀ արտաքին քաղաքականությունը՝

- միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդ. 13)

Չարդ 16

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ապահովում են՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

(ՀՀ Սահմ. հոդ. 14, մաս 1)

Չարդ 17

Նշվածներից ո՞վ է պարտավոր օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝

- յուրաքանչյուր քաղաքացի:

(ՀՀ Սահմ. հոդ. 14, մաս 3)

Չարդ 18

Նշվածներից ո՞վ է (ովքե՞ր են) պարտավոր օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝

- յուրաքանչյուր քաղաքացի:

(ՀՀ Սահմ. հոդ. 14, մաս 3)

Չարդ 19

Նշվածներից ո՞ւմ հոգաճության և պաշտպանության ներքո են հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը՝

- պետության:

(ՀՀ Սահմ. հոդ. 15, մաս 2)

Չարդ 20

Նշվածներից ո՞ւմ (ո՞ր մարմնի) հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են ընտանիքը, մայրությունը և մանկությունը՝

- պետության:

(ՀՀ Սահմ. հոդ. 16)

Ֆարց 21

Նշվածներից ի՞նչն է երաշխավորվում Հայաստանի Հանրապետությունում՝

- կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

(ՀՀ Սահմ. հոդ. 17, մաս 1)

Ֆարց 22

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող են կարգավորվել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 18, մաս 2)

Ֆարց 23

Նշվածներից ո՞րն է (որո՞նք են) Հայաստանի Հանրապետության պետական լեզուն (լեզուները)՝

- հայերենը:

(ՀՀ Սահմ. հոդ. 20)

Ֆարց 24

Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում Հայաստանի Հանրապետության դրոշի և զինանշանի մանրամասն նկարագրությունը՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 21, մաս 3)

Ֆարց 25

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող է սահմանափակվել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը՝

- միայն օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 25, մաս 2)

Հարց 26

Ի՞նչ նպատակներով կարող է սահմանափակվել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը՝

- պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդ. 25, մաս 2)

Հարց 27

Բժշկության և կենսաբանության ոլորտներում նշվածներից ի՞նչն է արգելվում՝

- եվգենիկական փորձերը:

(ՀՀ Սահմ. հոդ. 25, մաս 3)

Հարց 28

Բժշկության և կենսաբանության ոլորտներում նշվածներից ի՞նչն է արգելվում՝

- մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը:

(ՀՀ Սահմ. հոդ. 25, մաս 3)

Հարց 29

Նշվածներից ո՞ր դեպքում մարդուն չի կարելի ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի՝

- առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության:

(ՀՀ Սահմ. հոդ. 25, մաս 4)

Հարց 30

Նշվածներից ո՞վ ունի անձնական ազատության իրավունք՝

- յուրաքանչյուր ոք:

(ՀՀ Սահմ. հոդ. 27, մաս 1)

Հարց 31

Նշվածներից ո՞ր դեպքում անձն օրենքով սահմանված կարգով կարող է զրկվել անձնական ազատությունից՝

- եթե անձը չի ենթարկվել դատարանի իրավաչափ կարգադրությանը:

(ՀՀ Սահմ. հոդ. 27, մաս 1, կետ 2)

Հարց 32

Անձնական ազատությունից զրկված անձը ե՞րբ է տեղեկացվում ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին՝

- անհապաղ:

(ՀՀ Սահմ. հոդ. 27, մաս 2)

Հարց 33

Ի՞նչ նպատակներով կարող է օրենքով սահմանափակվել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝

- պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդ. 31, մաս 2)

Հարց 34

Նշվածներից ո՞ր իրավական ակտի հիման վրա կարող է բնակարանը օրենքով սահմանված դեպքերում խուզարկվել՝

- դատարանի որոշման:

(ՀՀ Սահմ. հոդ. 32, մաս 3)

Հարց 35

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքեր՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 32, մաս 3)

Հարց 36

Նշվածներից ո՞ր իրավական ակտով են սահմանվում ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 35, մաս 1)

Հարց 37

Ի՞նչ նպատակով կարող է օրենքով սահմանափակվել ամուսնանալու ազատությունը՝

- առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդ. 35, մաս 3)

Հարց 38

Ի՞նչ նպատակով կարող է օրենքով, դատարանի որոշմամբ կատարվել ծնողական իրավունքներից զրկում կամ դրանց սահմանափակում՝

- երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդ. 36, մաս 2)

Հարց 39

Նշվածներից ո՞վ է (ովքե՞ր են) պարտավոր հոգ տանել իր (իրենց) անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին՝

- չափահաս աշխատունակ անձինք:

Չարդ 40

Նշվածներից ո՞ւմ (ո՞ր մարմնի) հոգաժողովան և պաշտպանության ներքո են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները՝

- պետության:

(ՀՀ Սահմ. հոդ. 37, մաս 4)

Չարդ 41

Նշվածներից ո՞վ ունի օրենքով սահմանված դեպքերում և կարգով մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք՝

- յուրաքանչյուր ոք:

(ՀՀ Սահմ. հոդ. 38, մաս 2)

Չարդ 42

Նշվածներից ո՞վ ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք:

(ՀՀ Սահմ. հոդ. 40, մաս 1)

Չարդ 43

Նշվածներից ո՞վ ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք՝

- յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

(ՀՀ Սահմ. հոդ. 40, մաս 3)

Չարդ 44

Հայաստանի Հանրապետության քաղաքացու ո՞ր իրավունքը սահմանափակման ենթակա չէ՝

- Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը:

(ՀՀ Սահմ. հոդ. 40, մաս 4)

Ֆարց 45

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող է սահմանափակվել մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 41, մաս 2)

Ֆարց 46

Ո՞ր հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում՝

- ինքնաբուխ հավաքների:

(ՀՀ Սահմ. հոդ. 44, մաս 2)

Ֆարց 47

Նշվածներից ո՞ր մարմնում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման համար օրենքով կարող են սահմանվել սահմանափակումներ՝

- ռազմականացված մարմիններում:

(ՀՀ Սահմ. հոդ. 44, մաս 3)

Ֆարց 48

Նշվածներից ովքե՞ր չեն կարող լինել կուսակցության անդամ՝

- դատավորները:

(ՀՀ Սահմ. հոդ. 46, մաս 2)

Ֆարց 49

Նշվածներից ովքե՞ր չեն կարող լինել կուսակցության անդամ՝

- դատախազները և քննիչները:

(ՀՀ Սահմ. հոդ. 46, մաս 2)

Հարց 50

Ո՞ր իրավական ակտով սահմանված դեպքերում և ո՞ր իրավական ակտով կարող է կասեցվել կուսակցության գործունեությունը՝

- օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ:

(ՀՀ Սահմ. հոդ. 46, մաս 4)

Հարց 51

Ազգությամբ հայերը ո՞ր պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք՝

- Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից:

(ՀՀ Սահմ. հոդ. 47, մաս 3)

Հարց 52

Հայաստանի Հանրապետության քաղաքացին ինչի՞ց չի կարող զրկվել՝

- քաղաքացիությունից:

(ՀՀ Սահմ. հոդ. 47, մաս 5)

Հարց 53

Նշվածներից ո՞ր իրավական ակտով են սահմանվում ՀՀ քաղաքացիության դադարեցման հիմքերը՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 47, մաս 6)

Հարց 54

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 47, մաս 7)

Հարց 55

Նշվածներից ովքե՞ր չունեն ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք՝

- դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

(ՀՀ Սահմ. հոդ. 48, մաս 4)

Հարց 56

Նշվածներից ովքե՞ր չունեն ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք՝

- դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

(ՀՀ Սահմ. հոդ. 48, մաս 4)

Հարց 57

Նշվածներից ովքե՞ր չունեն ընտրվելու իրավունք՝

- դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

(ՀՀ Սահմ. հոդ. 48, մաս 4)

Հարց 58

Նշվածներից ո՞վ ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք՝

- յուրաքանչյուր քաղաքացի:

(ՀՀ Սահմ. հոդ. 49)

Հարց 59

Ի՞նչ նպատակով կարող է օրենքով սահմանափակվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց

գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը՝

- հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդ. 51, մաս 2)

Հարց 60

Նշվածներից ո՞ր տարիքի երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն է արգելվում՝

- մինչև 16 տարեկան:

(ՀՀ Սահմ. հոդ. 57, մաս 4)

Հարց 61

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող է սահմանափակվել գործադուլի իրավունքը՝

- օրենքով:

(ՀՀ Սահմ. հոդ. 58, մաս 2)

Հարց 62

Ո՞ր միջոցների հաշվին է օրենքով նախատեսված դեպքերում ցույց տրվում իրավաբանական օգնություն՝

- պետական միջոցների հաշվին:

(ՀՀ Սահմ. հոդ. 64, մաս 1)

Հարց 63

Նշվածներից ո՞ր դեպքում է հանցագործության համար մեղադրվողը համարվում անմեղ՝

- քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(ՀՀ Սահմ. հոդ. 66)

Հարց 64

Նշվածներից ո՞վ ունի ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք՝

- յուրաքանչյուր դատապարտյալ:

(ՀՀ Սահմ. հոդ. 70)

Հարց 65

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի՞ հետադարձ ուժ՝

- ունի:

(ՀՀ Սահմ. հոդ. 72)

Հարց 66

Ո՞ր դեպքում իր գործողության կամ անգործության համար անձը չի կարող դատապարտվել՝

- եթե գործողությունը կամ անգործությունը հանցանքի կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել:

(ՀՀ Սահմ. հոդ. 72)

Հարց 67

Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերն ունե՞ն հետադարձ ուժ՝

- չունեն:

(ՀՀ Սահմ. հոդ. 73, մաս 1)

Հարց 68

Նշվածներից ո՞րն է սահմանադրական օրենք՝

- Ընտրական օրենսգիրքը:

(ՀՀ Սահմ. հոդ. 103, մաս 2)

Հարց 69

Նշվածներից ո՞րն է սահմանադրական օրենք՝

- Հանրաքվեի մասին օրենքը:

(ՀՀ Սահմ. հոդ. 103, մաս 2)

Ֆարց 70

Նշվածներից ո՞րն է սահմանադրական օրենք՝

- Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը:

(ՀՀ Սահմ. հոդ. 103, մաս 2)

Ֆարց 71

Պատգամավորների ձայների ի՞նչ հարաբերակցությամբ են ընդունվում սահմանադրական օրենքները՝

- պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

(ՀՀ Սահմ. հոդ. 103, մաս 2)

Ֆարց 72

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սահմանումը՝ ըստ ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի՝

- Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու տեղական նշանակության հանրային հարցերը:

(ՀՀ Սահմ., հոդ. 179, մաս 1)

Ֆարց 73

Ինչպիսի՞ իրավական կարգավիճակ ունի համայնքը՝

- հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

(ՀՀ Սահմ., հոդ. 180, մաս 2)

Ֆարց 74

Պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով ո՞ւմ (ո՞ր մարմիններին) կարող են պատվիրակվել՝

- տեղական ինքնակառավարման մարմիններին:

(ՀՀ Սահմ. հոդ. 182, մաս 2)

Հարց 75

Նշվածներից ո՞րն է համայնքի ավագանու լիազորություններից՝

- օրենքով սահմանված կարգով ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են պարտադիր կատարման համայնքի տարածքում:

(ՀՀ Սահմ. հոդ. 182, մաս 3)

Հարց 76

Համայնքի բնակիչները ինչպե՞ս կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝

- համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

(ՀՀ Սահմ. հոդ. 183, մաս 1)

Հարց 77

Նշվածներից ո՞րն է համայնքի ավագանու լիազորություններից՝

- օրենքով սահմանված կարգով տնօրինել համայնքի սեփականությունը:

(ՀՀ Սահմ. հոդ. 184, մաս 3)

Հարց 78

Հանրապետության Նախագահն ապահովում է՝

- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 49*)

Հարց 79

Նշվածներից ո՞վ կարող է ընտրվել Հանրապետության Նախագահ՝

- երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 50*)

Հարց 80

Ե՞րբ է Հանրապետության Նախագահին իր պաշտոնն ստանձնում՝

- Հանրապետության նախորդ Նախագահի լիազորությունների ավարտման օրը:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 51*)

Հարց 81

Հանրապետության Նախագահին ի՞նչ ժամկետում է ստորագրում և հրապարակում ՀՀ Ազգային ժողովի ընդունած օրենքը՝

- օրենքն ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 82

Ո՞վ է ընդունում միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը՝

- Հանրապետության Նախագահը:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 83

Հանրապետության Նախագահին ի՞նչ ժամկետում է ստորագրում և հրապարակում ՀՀ Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը՝

- հնգօրյա ժամկետում:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 84

Նշվածներից ո՞վ (ո՞ր մարմինն) է իրականացնում արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը՝

- Հանրապետության Նախագահը:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 85

Ո՞ւմ (ո՞ր մարմնի) առաջարկությամբ է Հանրապետության Նախագահը նշանակում և ազատում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝

- ՀՀ գլխավոր դատախազի:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 86

Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում արտակարգ դրության իրավական ռեժիմը՝

- օրենքով:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 87

Նշվածներից ո՞վ (ո՞ր մարմինն) է ներում շնորհում դատապարտյալներին՝

- Հանրապետության Նախագահը:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 88

Նշվածներից ո՞ւմ (ո՞ր մարմնի) առաջարկությամբ է Հանրապետության Նախագահը նշանակում ՀՀ վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին՝

- ՀՀ արդարադատության խորհրդի:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Հարց 89

Նշվածներից ո՛վ (ո՛ր մարմինն) է հաստատում, կասեցնում կամ չեղյալ հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը՝

- Հանրապետության Նախագահը:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

Քարտ 90

Նշվածներից ո՛րն է Հանրապետության Նախագահի լիազորություններից՝

- նշանակել ՀՀ արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամների:

(2005 թ. ՀՀ Սահմ. հոդ. 55*)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

*-ով նշված հարցերի համար հիմք է հանդիսացել 2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունված ՀՀ Սահմանադրությունը (փոփոխություններով):
